ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0615-Ա

<<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-Ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 04/09/2026 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1. Թույլատրել <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍՊԸ-ին՝ Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոցի 12/8 հասցեին հարակից գտնվող գովազդային վահանակի վրա Ա և Բ կողմերում ընդհանուր 36 ք/մ մակերեսով տեղադրված սոցիալական գովազդի (Կրթվելը նորաձև է) ժամկետը երկարացնել մինչև 30/09/2026 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0616-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-023-0052-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Անուշ Բաղրամյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի Կենտրոնական խճուղու 05-023-0052-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Գեղամասար բնակավայր, Կենտրոնական խճուղի, 11 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0617-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-008-0062-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,17852 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 26.12.2002 թվականի ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 24.07.2025 թ. <<Հատակագծերի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները և հատակագծերի ներկայացման կարգը սահմանելու մասին>> թիվ 1028-ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումը, Նորայր Սարիբեկի Ավետիսյանի դիմումը (ծնված՝ 13.12.1967 թ.), որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և այն հանգամանքը, որ 0,17852 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի՝ 05-008-0062-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի 0,17852 հա բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել՝ Ակունք բնակավայր, 9-րդ փողոց, 55 հասցե:

2. Նորայր Սարիբեկի Ավետիսյանին (ծնված՝ 13.12.1967թ.) և Ելենա Գերասիմի Ավետիսյանին (ծնված՝ 11.09.1975 թ.) պատկանող Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի 05-008-0062-0003 կադաստրային ծածկագրով 0,17852 հա հողամասում 2015 թվականին կառուցված բնակելի տուն՝ 110,0 քմ, (ներքին մակերես՝ 85,50 քմ) և աստիճանահարթակ՝ 23,90 քմ ճանաչել որպես ինքնակամ կառույցներ:

3. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող Ակունք բնակավայրի 05-008-0062-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման 0,17852 հա հողամասը համաձայն 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի ճանաչվել է նրանց սեփականություն:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0618-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 05-005-0175-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշմաբ սահմանված կարգով, հիմք ընդունելով <<ԱՐՏ-ԱՐՏ>> ՍՊԸ-Ի կողմից 07.08.2026 թվականին տրված եզրակացությունը և Արտակ Վեմիրի Ավետիսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոցի 05-005-0175-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Երիտասարդության փողոց, 6/1 աստիճանահարթակ հասցե:

2. Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոց, 6/1 հասցեում Արտակ Վեմիրի Ավետիսյանի կողմից 2016 թվականին ինքնակամ կառուցված հարթակ՝ 9,0 քմ (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026HBVEFM) և առանձնացված 0,0009 հա հողամասը ճանաչել օրինական, որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

3. ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշման 3-րդ կետի՝ հողամասի գործառնական նշանակությունը համարվում է փոփոխված, որպես բնակելի կառուցապատման:

4. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և պետական գրանցման ծախսերը իրականացնել ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0619-Ա

ԱՐՏԱԿ ՎԵՄԻՐԻ ԵՎ ԱԼԻՍԱ ՌԱՇԻԴԻ ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 6 ՇԵՆՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ 29,50 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՎ 12,50 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՐԹԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական>> օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով <<ԱՐՏ-ԱՐՏ>> ՍՊԸ-Ի կողմից 07.08.2026 թվականին տրված շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Վարդենիս քաղաքի բնակիչ Արտակ Վեմիրի Ավետիսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի, Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոց 6 շենք թիվ 2 հասցեում 2016 թվականին ինքնակամ կառուցված հարթակ՝ 12,50 քմ, 2018 թվականին կառուցված բնակարան՝ 24,20 քմ (ներքին մակերես 20,30 քմ և 5,30 քմ) մակերեսներով (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026C8ZPUU) ճանաչել օրինական, որպես Արտակ Վեմիրի և Ալիսա Ռաշիդի Ավետիսյանների սեփականություն:

2. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

1) Հարթակ՝ 12,50 քմ x 20000 ՀՀ դրամ x 0,1422 գործակից = 35550 ՀՀ դրամ:

2) Բնակարան՝ 24,20 քմ (արտաքին) և 5,30 քմ (ներքին) = 29,50 x 20000 ՀՀ դրամ x 0.1422 գործակից = 83900 ՀՀ դրամ:

3) Դուռ, պատուհան՝ 6 հատ x 10000 ՀՀ դրամ x 0.1422 գործակից = 8550 ՀՀ դրամ:

Ընդամենը 128000 (մեկ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, որը պետք է 60-օրյա ժամկետում մուծվի տեղական բյուջե (ինքնակամ շինության օրինականացման հաշվեհամար-900155101208):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0620-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0087-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00434 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 731-Ն, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումներով, հիմք ընդունելով <<ԹԻՎ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-ի կողմից 31.07.2026 թվականին տրված անավարտ շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Գոռ Կամոյի Սաֆարյանի դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0,00434 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի 05-005-0087-0001 կադաստրային ծածկագրով 0,00434 հա հողամասին տրամադրել Վարդենիս քաղաք, Ա. Սեսմանուկյան փողոց, 1/55 հասցե:

2. ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշման 3-րդ կետի՝ հողամասի գործառնական նշանակությունը համարվում է փոփոխված, որպես բնակելի կառուցապատման:

3. Վարդենիս համայնքի, Վարդենիս քաղաքի Ա. Սեսմանուկյան փողոց, 1/55 հասցեում Գոռ Կամոյի Սաֆարյանի կողմից 2020 թվականին ինքնակամ կառուցված անավարտ շինություն՝ 43,42 քմ (ներքին մակերես՝ 33,50 քմ) և սպասարկման համար նախատեսված 0,00434 հա հողամասը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026KXUHAW) ճանաչել օրինական, որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

4. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և պետական գրանցման ծախսերը իրականացնել ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0621-Ա

ԳՈՌ ԿԱՄՈՅԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Ա. ՍԵՍՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ 05-005-0087-0154 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0035 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՑՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով <<ԹԻՎ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-ի կողմից 31.07.2026 թվականին տրված անավարտ շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Գոռ Կամոյի Սաֆարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Ա. Սեսմանուկյան փողոց թիվ 1/50 հասցեի 05-005-0087-0154 կադաստրային ծածկագրով հողամասում 2020 թվականին ինքնակամ կառուցված անավարտ շինություն՝ 11,83 քմ (ներքին մակերես՝ 8,70 քմ) մակերեսով, (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026LWGLUW) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ճանաչել օրինական, որպես՝ Գոռ Կամոյի Սաֆարյանի սեփականություն:

2. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

2.1 Անավարտ շինություն՝ 11,83 քմ x 10000 x 0,1028 = 12200 ՀՀ դրամ

2.2 Ընդամենը 12200 (տասներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որը պետք է 60-օրյա ժամկետում մուծվի տեղական բյուջե (ինքնակամ շինության օրինականացման հաշվեհամար-900155101208):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0622-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0230-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,29688 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 11.12.2023 թվականի N 2-7 եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 13 հուլիսի 2006 թվականի N 1140-Ն և 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումները՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի 05-005-0230-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի 0,29688 հա այլ հողատեսքը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

2. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի 05-005-0230-0001 կադաստրային ծածկագրով 0,29688 հա հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի <<այլ հողեր>>-ից փոփոխել բնակավայրերի՝ <<հասարակական կառուցապատման>>:

3. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի, Զորավար Անդրանիկի փողոցի 05-005-0230-0001 կադաստրային ծածկագրով 0,29688 հա հողամասին տրամադրել Զորավար Անդրանիկի փողոց 80 հողամաս հասցե:

4. Կատարել իրավունքի պետական գրանցում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0623-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի «29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ 2 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 797-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.07.2026 թվականի ԳԴ/0157/02/26 քաղաքացիական գործով վճիռը՝ որոշում եմ.

1. Անվավեր ճանաչել Վարդենիս համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի «29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ 2 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 797-Ա որոշումը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0624-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի «2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ 3 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 794-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.07.2026 թվականի ԳԴ/0159/02/26 քաղաքացիական գործով վճիռը՝ որոշում եմ.

1. Անվավեր ճանաչել Վարդենիս համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի «2003 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ 3 վարձակալության պայմանագիրը միակողմանի լուծելու մասին» N 794-Ա որոշումը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2026 թվականի N 0625-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Ե. ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-005-0073-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 118-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 9-րդ, 16-րդ կետերով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 38.1 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 24.07.2025 թվականի <<Հատակագծերի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները և հատակագծերի ներկայացման կարգը սահմանելու մասին>> թիվ 1028-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աճուրդի կենտրոնի գործ 1150-ը, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական շենքի սպասարկման 0.23447 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս քաղաքի Ե. Չարենցի փողոց, 38 հասցեում գտնվող «Վարդենիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ին պատկանող 05-005-0073-0009 կադաստրային ծածկագրով 1960 թվականին կառուցված վարչական շենք՝ 338,3 քմ, պահեստ՝ 29,20 քմ, քանդված շինություններ՝ 188,8քմ, պարիսպ՝ 34,6 քմ մակերեսով շենք շինությունների զբաղեցրած և սպասարկման հողամասի մակերեսը կազմում է 0.23447 հա:

2. Վերականգնել ընկերության սեփականության իրավունքը՝ «Վարդենիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի վարչական շենք՝ 338,3 քմ, պահեստ՝ 29,20 քմ, քանդված շինություններ՝ 188,8քմ, պարիսպ՝ 34,6 քմ մակերեսով շենք շինությունների զբաղեցրած և սպասարկման 0.23447 հա հողամասի նկատմամբ:

3. Ընկերության կողմից գույքի օտարման դեպքում հողամասի կադաստրային արժեքը ենթակա է վճարման:

4. Չեղյալ համարել Վարդենիս համայնքի ղեկավարի 11 օգոստոսի 2026 թվականի N 0540-Ա և 19 օգոստոսի 2026 թվականի N 0559-Ա որոշումները:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 08
ք. Վարդենիս